ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ-72-2024

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան դեկտեմբերի 12 2024 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պետական մարմին)՝ ի դեմս գլխավոր քարտուղար՝ Հասմիկ Հակոբյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» ՀԿ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս նախագահ Արմեն Մելիքբեկյանի, մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 24.01.2024թ. N 72-Ա որոշումը և այդ որոշման հիմքում ընկած B4175883054 և B4904242815 հաշիվ վավերագրերը (ներկայացված Կատարողի կողմից)՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պետական մարմինը Կատարողին է հատկացնում ֆինանսական միջոցների հաշվին հայ մեծանուն ֆուտբոլիստ, 1973 թվականի ԽՍՀՄ չեմպիոն և գավաթակիր, «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալակիր Նիկոլայ Անդրանիկի Ղազարյանի հուղարկավորության հետ կապված Կատարողի ծախսերի փոխհատուցման նպատակով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կատարողը պարտավոր է՝

2.1.1. Ընդունել հայ մեծանուն ֆուտբոլիստ, 1973 թվականի ԽՍՀՄ չեմպիոն և գավաթակիր, «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալակիր Նիկոլայ Անդրանիկի Ղազարյանի հուղարկավորության հետ կապված Կատարողի ծախսերի փոխհատուցման նպատակով Պետական մարմնի կողմից հատկացված միջոցները:

2.2. Պետական մարմինը պարտավոր է՝

2.2.1 Հատկացնել գումարը Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով նախատեսված «1195. Հասարակության և պետության հանդեպ հատուկ ծառայություններ մատուցած քաղաքացիների մահվան դեպքում արարողակարգային միջոցառումների կազմակերպում» ծրագրի «11001. Հասարակության և պետության հանդեպ հատուկ ծառայություններ ունեցած քաղաքացիների մահվան դեպքում հրաժեշտի ծիսակատարության և թաղման կազմակերպում, գերեզմանի բարեկարգման և մահարձանի պատրաստման ու տեղադրման աշխատանքներին աջակցություն» միջոցառման իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցներից (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Հուղարկավորության նպաստներ բյուջեից» 4726 հոդվածով):

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Պետական մարմնի կողմից սույն պայմանագրի 2.2-րդ կետով նախատեսված պարտավորությունները չկատարվելու կամ ոչ պատշաճ կատարվելու դեպքում միակողմանի

Սկանավորվել է CamScanner-ով

լուծել սույն պայմանագիրը՝ դադարեցնելով պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը:

2.4. Պետական մարմինը իրավունք ունի՝

2.4.1. Կատարողի կողմից սույն պայմանագրի 2.1-ին կետով նախատեսված պարտավորությունները չկատարվելու կամ ոչ պատշաճ կատարվելու դեպքում հետ պահանջել փոխանցված գումարը, միակողմանի լուծել սույն պայմանագիրը՝ դադարեցնելով պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

3.1. Պետական մարմինը «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» ՀԿ-ի կողմից ներկայացված B4175883054 և B4904242815 հաշիվ վավերագրերը կատարված ծախսերին համապատասխան Կատարողին հատկացնում է 1585.0 հազար (մեկ միլիոն հինգ հարյուր ութսունհինգ հազար) դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները):

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարը Կատարողին հատկացվում է պայմանագրի կնքումից հետո, 5 բանկային օրվա ընթացքում՝ փոխանցելով նրա բանկային հաշվին:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում կնքման պահից և իր գործողությունը շարունակում է մինչև սույն պայմանագրով կողմերի պարտավորությունների ողջ ծավալով կատարման ավարտը:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում դրանք լուծվում են օրենքով սահմանված կարգով:

Սկանավորվել է CamScanner-ով

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Պայմանագիրը՝ կազմված 3 թերթից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

7.2. Սույն պայմանագրի բոլոր լրացումներն ու փոփոխությունները պետք է կազմվեն գրավոր, ստորագրվեն և կնքվեն կողմերի կողմից:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011029650 ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

Հ. Հակոբյան

Կ.S

ԿԱՏԱՐՈՂ՝
«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակականկազմակերպություն
ք. Երևան, Խանջյան փ.27
Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ ,
Հ/Հ՝ 1570059720290300
ՀՎՀՀ՝ 02566915
Նախագահ՝

Ա. Մելիքբեկյան

Հ. S.

Սկանավորվել է CamScanner-ով